ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ՝ Հայկ Քոչինյանի և բժշկական սպասարկման բաժնի պետ՝ Արա Հովհաննիսյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Հայկ Քոչինյան, Արա Հովհաննիսյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2019 թվականի ապրիլի 22-24-ը:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության պատիժների կատարման դաշնային ծառայություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցելու ԱՊՀ անդամ երկրների քրեակատարողական ծառայության ղեկավարների խորհրդի աշխատանքային խմբի 3-րդ նիստին:

Քննարկված թեմաները՝ «Հատուկ քանակակազմի բժշկական սպասարկում, դատապարտյալների վերասոցիալականացման համալիր միջոցառումներ՝ բժշկական, հոգեբանական, բժշկա-սոցիալական վերականգնում, այդ թվում նաև թմրամոլությամբ և ալկոհոլամոլությամբ տառապող անձանց»

Բացի այդ, նիստի ընթացքում քննարկվել են նաև 2019թ-ի հուլիսին Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք՝ Նուր-Սուլթանում կայանալիք ԱՊՀ անդամ երկների քրեակատարողական ծառայության ղեկավարների խորհրդի հերթական՝ 4-րդ նստաշրջանի օրակարգին և այլ կազմակերպչական միջոցառումներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ՝ Հ.Քոչինյանը և բժշկական սպասարկման բաժնի պետ՝ Ա.Հովհաննիսյանը 2019թ-ի ապրիլի 23-ին, Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում մասնակցել են «ԱՊՀ անդամ երկրների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի» աշխատանքային խմբի փորձագետների

3-րդ հերթական նիստին, որին մասնակցում էին նաև Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի Հանրապետությունների քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ, ինչպես նաև պենիտենցիար բժշկության ոլորտի փորձագետներ և գիտնականներ:

Նիստի շրջանակներում քննարկվեցին անազատության մեջ պահվող անձանց բժշկական սպասարկման ծառայությունների կազմակերպա-իրավական հիմնավորումները, բժշկական ծառայությունների անկախության երաշխիքների արդյունավետության վերաբերյալ մասնակից պետությունների փորձը, թմրամոլների և թմրամոլության նկատմամբ կախվածություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց բժշկական օգնության կազմակերպման առանձնահատկություններն ու ոլորտում արձանագրված հաջողությունները:

Զեկույցով հանդես եկան ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ՝ Հ.Քոչինյանն ու ծառայության բժշկական սպասարկման բաժնի պետ՝ Ա.Հովհաննիսյանը, ովքեր մանրամասն ներկայացրեցին Հայաստանի Հանրապետության քրեակատարողական բժշկության ոլորտում առկա իրավակարգավորումները, մեկնարկած բարեփոխումներն ու հեռանկարային ծրագրերը: Մասնավորապես՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծման հայեցակարգի, կազմակերպչական հիմքերի և պայմանների, քրեակատարողական ծառայությունում **e-Penitentiary** ժամանակակից էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների, ափիոդային թմրամիջոցներից կախում ունեցող անձանց նկատմամբ «Մեթադոնային» փոխարինող բուժման կազմակերպման և արձանագրված արդյունքների, ինչպես նաև ալկոհոլամոլությամբ տառապող անձանց նկատմամբ իրականացվող բժշկական սպասարկման և օգնության աշխատանքների վերաբերյալ:

Բարձր գնահատելով ՀՀ քրեակատարողական համակարգում և բժշկական սպասարկման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած բարեփոխումները՝ նիստին մասնակից բոլոր երկրների փորձագետներն արձանագրեցին, որ բժշկական սպասարկման ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններ ստեղծելու և դրանք քաղաքացիական առողջապահական համակարգում գործող տեղեկատվական շտեմարաններին կապելու նախաձեռնություններն այլևս անհրաժեշտություն են, որոնք իրապես ունակ են ապահովելու պենիտենցիար բժշկության անկախությունն ու արդյունավետությունը:

Առաջավոր փորձի փոխանակման և համապատասխան հետազոտությունների տեղեկատվական հարթակ ստեղծելու նպատակով, որոշվեց պենիտենցիար բժշկության ոլորտի առնչությամբ մասնակից երկների կողմից ներկայացված զեկույցներով կազմել իրավա-տեղեկատվական մեթոդական ուղեցույց և հրապարակել այն:

Հիմք ընդունելով դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանն անցնելու ՀՀ կառավարության 2019թ-ի գործունեության ծրագրում ամրագրված տեսլականը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ներկայացուցիչների կողմից առաջարկվեց «ԱՊՀ անդամ երկրների քրեակատարողական ծառայության ղեկավարների խորհրդի» աշխատանքային խմբի փորձագետների հաջորդ նիստի օրակարգում ընդգրկել անազատության մեջ պահվող անձանց վերասոցիալականացման արդիական թեմաներ՝ շեշտը դնելով ինքնավնասումների և ինքնասպանությունների կանխարգելման ուղղությամբ իրականացվող ծրագրերին, ինչը հնարավորություն կընձեռի ծանոթանալու ոչ միայն տարբեր երկրներում գործող վերականգնողական կամ կանխարգելիչ ծրագրերին, այլև առարկայական քննարկումներ իրականացնել պրակտիկ աշխատակիցների հետ, ուսումնասիրել վերջիններիս փորձը և ստեղծել արդիական նախաձեռնությունների համապարփակ տեղեկատվական հարթակներ:

Փորձագետների խմբի նիստում քննարկվեցին նաև 2019թ-ի հուլիսին Ղազախստանի Նուր-Սուլթան քաղաքում կայանալիք «ԱՊՀ անդամ երկրների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի» հերթական՝ 4-րդ նստաշրջանի նախապատրաստման և օրակարգի ձևավորմանն առնչվող հարցեր ևս, որոնք մինչև նիստի օրակարգում ընդգրկվելը կհամաձայնեցվեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հետ:

Ապրիլի 24-ին, «ԱՊՀ անդամ երկների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի» աշխատանքային խմբի անդամներն ու պենիտենցիար բժշկության ոլորտի փորձագետներն այցելեցին նաև Մոսկվա քաղաքի թիվ 1 քննչական մեկուսարան, որտեղ վերջիններիս ներկայացվեց թմրամոլությամբ և ալկոհոլամոլությամբ տառապող կալանավորված անձանց և դատապարտյալների վերականգնողական կենտրոնում իրացվող բժշկա-սոցիալական ծրագրերը, բուժման կուրսի ընթացքում կիրառվող վերականգնողական և տեխնիկական միջոցները, ինչպես նաև արձանագրված արդյունքները:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ՝ **Հայկ Քոչինյան**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման բաժնի պետ՝ **Արա Հովհաննիսյան**

26.04.2019թ.